ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00, citymeghri@gmail.com, ՀՎՀՀ 09425378

N Ե-1782
16 սեպտեմբեր 2025թ.

«ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԱՇՈՏ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

(Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

Մեղրիի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՊՐՈՇԻՆ» և «Բիլդինգ Կոնստրուկշն» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2024 թվականի մարտի 29-ին կնքված N «ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/01» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 հավելվածի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ «Նռնաձոր բնակավայրում նոր մանկապարտեզի հիմնում» շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Համաձայն Պայմանագրի 1.3 կետի՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 2 հավելվածով:

21.03.2025թ. կնքված N 1 համաձայնագրով սահմանվել է 2025 թվականի կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկը՝ թիվ 2 հավելվածի, համաձայն որի աշխատանքների ավարտը սահմանվել է ոչ ուշ, քան 2025 թվականի ապրիլի 28-ը: Մեղրիի համայնքի ղեկավարի կողմից 2024 թվականի ապրիլի 12-ին տրամադրվել է թիվ 06 շինարարության թույլտվությունը, իսկ 2024 թվականի օգոստոսի 25-ին տրված 2-5 ձև տեղեկանքի՝ շինարարական աշխատանքները սկսվել են 2024 թվականի օգոստոսի 29-ին: 2024 թվականի հուլիսի 26-ին Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կողմից Ե-1801 գրությամբ դիմել է Ձեզ ստանալու հիմնավոր պարզաբանում աշխատանքները չսկսելու վերաբերյալ: 2025 թվականի հունիսի 26-ին Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կողմից Ե-1310 և 2025 թվականի օգոստոսի 21-ի Ե-1633 գրություններով դիմել ենք Ձեզ ստանալու հիմնավոր պարզաբանում շինարարական աշխատանքները չկատարելու

և շինարարական աշխատանքների կատարման ժամանակացույցը խախտելու վերաբերյալ, սակայն որևէ հիմնավոր պատասխան չի ներկայացվել շինարարական աշխատանքների սահմանված ժամկետում կատարելու վերաբերյալ: 2025 թվականի օգոստոսի 27-ին հրավիրել ենք Ձեզ Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ քննարկելու հետագա աշխատանքների կատարման և կամ պայմանագրի լուծման վերաբերյալ, սակայն ի պատասխան մեր գրության տեղեկացրել եք, որ 2025 թվականի սեպտեմբերի 02-ին ժամը 10:00-ին կներկայանաք Մեղրիի համանքապետարանի աշխատակազմ, սակայն նշված օրը չեք ներկայացել՝ առանց որևէ պարզաբանման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Համաձայն Պայմանագրի 3.1.4 կետի ա) պարբերության՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ Պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, Պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով, որ «ՊՐՈ ՇԻՆ» և «Բիլդինգ Կոնստրուկշն» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի գրությունները, Պատվիրատուն միակողմանի մասնակի հրաժարվում է կնքված պայմանագրից համարելով այն լուծված ՝ 65 562 410 /վաթսունհինգ միլիոն հինգգ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր տաս/ ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման

բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի կատարման ապահովմանհամարսահմանվածգումարը՝ Պատվիրատուի 900305081094 հաշվեհամարին, ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

-պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ՝ Շ. Սարգսյան
հեռ.028643500